# «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ կողմից թողարկված Visa վճարային քարտերի թվային համարժեքների կիրառմամբ գործարքների իրականացման արշավ

## 1. Ներածություն

1.1 Բանկի կողմից թողարկված Visa վճարային համակարգի քարտերի, բացառությամբ Visa Business քարտերի, (այսուհետ՝ Քարտ) քարտապանների (այսուհետ՝ Քարտապան) համար, ովքեր ունեն Android օպերացիոն համակարգով աշխատող հեռախոսներ և օգտվում են «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ–ի (այսուհետ՝ Կազմակերպիչ) մոբայլ բանկինգ հավելվածից (այսուհետ՝ACBA Digital հարթակ), Կազմակերպչի կողմից իրականացվում է արշավ (այսուհետ՝ Արշավ):

1.2 Մասնակցելով Արշավին՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները:

1.3 Սույն Պայմաններին և Դրույթներին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

## 2. Ընդհանուր դրույթներ

2.1 Քարտապանների համար իրականացվող Արշավի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տրամադրվում է www.acba.am կայքում:

2.2 Կազմակերպիչն իրավունք ունի փոփոխություն կատարել սույն Պայմաններում և Դրույթներում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի 2.1 կետում նշված կայքում:

## 3. Մասնակցության պայմանները

3.1 Արշավին մասնակցելու համար Քարտապանը պետք է իրականացնի վճարումներ՝ կիրառելով իր Քարտի թվային համարժեքը (այսուհետ՝ թոքենիզացիա):

3.2 Թոքենիզացումն իրականացվում է ACBA Digital հարթակի միջոցով:

3.3 Թոքենիզացված գործարքների իրականացումը հնարավոր է միայն Android օպերացիոն համակարգով աշխատող բջջային հեռախոսների կիրառմամբ:

3.4 Թոքենիզացված Քարտով Արշավի շրջանակում Քարտապանները Հայաստանում և արտերկրում կատարելով նվազագույնը 10 հատ, մեկ գործարքը նվազագույնը 1,000 ՀՀ դրամի անհպում վճարային գործարքներ (այսուհետ՝ Գործարքներ) հնարավորություն կունենան մասնակցել Բանկի կողմից իրականացվող խաղարկությանը:

3.5 Արշավի շրջանակում թվով 10 հաղթողի կտրամադրվի Samsung Galaxy S20 Ultra հեռախոս (այսուհետ՝ Պարգևատրում):

3.6 Գործարքների իրականացման ժամանակահատված է համարվում՝ ս.թ. դեկտեմբերի 3-ից մինչև 2021թ. փետրվարի 3-ը ներառյալ:

3.7 Գործարքների հաշվարկը իրականացվելու է ըստ յուրաքանչյուր քարտի:

3.8 Սույն Պայմանների և Դրույթների 3.4 կետի պայմաններին յուրաքանչյուր անգամ բավարարելու դեպքում Քարտապանի տվյալները նույնքան անգամ կներառվեն խաղարկության ցանկի մեջ:

3.9 Յուրաքանչյուր հաճախորդ, անկախ քարտերի քանակից, կարող է ստանալ սույն Պայմանների և Դրույթների 3.5 ենթակետով սահմանված առավելագույնը մեկ Պարգևատրում:

3.10 Գործարքների հաշվարկը կատարելու համար հիմք է ընդունվում Գործարքի կատարման ամսաթիվը:

3.11 Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում տրամադրված Պարգևատրման որակի համար:

3.12 Պարգևատրումը ենթակա չէ փոխարինման:

3.13 Արշավի ամփոփումը կիրականացվի մինչև 2021 թ. փետրվարի 15-ը ներառյալ:

3.14 Հաղթողները կորոշվեն պատահականության սկզբունքով՝ առցանց ծրագրի միջոցով (օրինակ՝ https://commentpicker.com):

3.15 Առցանց ծրագիրը պատահականության սկզբունքով կընտրի տասը հաճախորդ, ովքեր կստանան մեկական հեռախոս:

3.16 Այն դեպքում, եթե ծրագիրն ընտրի նույն հաճախորդին մեկից ավելի անգամ, մասնակիցը կստանա միայն մեկ Պարգևատրում, իսկ ավտոմատ համակարգը նորից կգործարկվի՝ այլ հաղթող որոշելու համար:

3.17 Հաղթողների ընտրության գործընթացը կիրակնացվի 2021 թ. փետրվարի 15-ին՝ մինչև ժամը 23:59-ը, Բանկի ֆեյսբուքյան էջով՝ ուղիղ հեռարձակմամբ: Հեռարձակման ստույգ ժամի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կիրապարակվի Կազմակերպչի ֆեյսբուքյան էջում:

3.18 Պարգևատրումները տրամադրվում են Քարտապաններին խաղարկության օրվանից հետո 20 աշխատանքային օրերի ընթացքում:

3.19 Բանկի կողմից զեղծարար գործարքի վերաբերյալ հիմնավոր կասկած ունենալու պարագայում Քարտապանի՝ խաղարկության մասնակցությունը կարող է անվավեր ճանաչվել: Զեղծարար գործարքի չափանիշները սահմանվում և որոշվում են Բանկի կողմից:

3.20 Մինչև խաղարկության իրականացումը և Պարգևատրման հանձնումը Արշավի շրջանակում հաշվարկված Գործարքների հետվճարներ լինելու պարագայում Բանկը իրավունք ունի չեղյալ համարել Քարտապանի մասնակցությունը:

3.21 «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ խմբի անդամ կազմակերպության, «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ աշխատակիցները չեն կարող հանդիսանալ արշավի մասնակից:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել www.acba.am կայք կամ զանգահարել 010-31-88-88 հեռախոսահամարով:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: